ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

19 ՀՈՒԼԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու նիստին ներկա էին 8ավագանու անդամներ:

Բացակա էին Արմեն Մարիկյանը, Վրույր Այվազյանը, Վարսենիկ Քալաշյանը, Հրայր Թորոսյանը, Արտյոմ Տոնոյանը, Թամարա Գրիգորյանը:

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Կ. Լալազարյանը, Մ.Ալավերդյանը, Խ.Մկրտումյանը, համայնքապետարանի աշխատակիցներ ՝ Մ. Մեսրոպյանը, Մ.Սաքուլյանը, Ս.Ղուկասյանը, Ս.Սուքիասյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Խաչիկ Վարդանյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Սերինե Նալբանդյանը</u>:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

/զեկ. Խ.Վարդանյան/

2. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

3.Գյուլագարակ համայնքի 2023թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

4.Գյուլագարակ համայնքի ավագանու 28.10.2022թվականի թիվ 58-Որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/Զեկ. Ս.Ղուկասյան/

5.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի հողի հարկի տույժը զիջելու մասին

/Ռ.Օհանյան/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թ.մայիսի 17-իհերթական նիստիօրակարգը՝համաձայնհավելվածի:

/Զեկ. Սերինե Նալբանդյանը/

ԿՈՂՄ-7, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 74-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2023թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 75-Ն/

Լսեցին

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1 .Ընդունել ի գիտություն Գյուլագարակ համայնքի 2023 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը:

/Զեկ.Մ. Մեսրոպյան/

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Լսեցին

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերին մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Գյուլագարակ համայնքի ավագանու 2022թվականի հոկտեմբերի 28-ի « ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԻՂ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշումը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

1.06-104-0119-0028 կադաստրային ծածկագրի 3.838 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել վերավարձակալ <<ՍԵՐՄՆԱԲՈՒՅԾ>> ՍՊԸ-ին/ 1255210 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հինգ հազար երկու հարյուր տասը / ՀՀ դրամով:

2.06-104-0101-0004 կադաստրային ծածկագրի 7.279 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել վերավարձակալ <<ՍԵՐՄՆԱԲՈՒՅԾ>> ՍՊԸ-ին/ 2861210 /երկու միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր տասը /ՀՀ դրամով:

3.06-104-0106-0001 կադաստրային ծածկագրի 30.56 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել վերավարձակալ <<ՍԵՐՄՆԱԲՈՒՅԾ>> ՍՊԸ-ին/22783580 /քսաներկու միլիոն յոթ հարյուր ութսուներեք հազար հինգ հարյուր ութսուն/ ՀՀ դրամով:

/Զեկ.Ս.Ղուկասյան/

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 77-Ա/

Լսեցին

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ.հունիսի 22 -ի թիվ 822 որոշումը, համայնքի բնակիչների դիմումները՝ հողի հարկերի տույժերը զիջելու մասին , Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Կիրառել՝

1.Հողի հարկի գոյացած տույժի արտոնություններ կուտակված ապառքը ամբողջությամբ և միանգամից մարած բնակիչների՝ համաձայն հավելվածի:

/Զեկ. Ռ.Օհանյան/

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 78-Ա/

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐՏՈՒՂԱՐԿՉ՝ ՍԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ